



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART
INTERNATIONAL



Պատասխանատու անձ՝ Արփինե Հակոբյան,
ՀԿԿենտրոն՝ ՔՀԶ ՀԿ Վանաձորի մասնաճյուղի համակարգող

Հեռ./ֆաքս 091-643317
Էլ. Փոստ: arp-hak@mail.ru

Հունվարի 26-ին Վանաձորում կտրվի Քաունթերփարթ ինթերնեյշնլ Հայաստանի Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվելիք համայնքային զարգացման դրամաշնորհային ծրագրերի մեկնարկը L.ռոու, Շիրակի և Տավուշի մարզերի 9 գործընկեր համայնքներում. Դեբեդ, Դսեդ, Ծաթեր, Հայկաձոր, Ախուրյան, Մարալիկ, Այգեհովիտ, Գանձաքար և Կոթի:

Ծրագրի նպատակն է համայնքներում աջակցել քաղաքացիական նախաձեռնությունների և համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով սերտ համագործակցություն համայնքային աշխատանքային խմբերի, հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի ու մասնավոր հատվածի միջև:

Յուրաքանչյուր ծրագրի համար Քաունթերփարթ ինթերնեյշնլ Հայաստանը կհատկացնի 1.7 մլն ՀՀ դրամ, իսկ համայնքը համայնքի ներդրումը կկազմի առնվազն 25 տոկոս: Նախատեսված է ծրագրերն իրականացնել 2012 թվականի հունվար – հուլիս ամիսներին:

Նախաձեռնությունների իրականացումը մարզերում համակարգվում է ‘ՀԿ Կենտրոն’ ՔՀԶ ՀԿ Վանաձորի մասնաճյուղի կողմից:

Դրամաշնորհային ծրագրերը ներառում են համայնքներում մարզամշակութային կյանքի ակտիվացում, տեղեկատվության հասանելիության ապահովում, տուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ, միջհամայնքային կապերի ընդլայնում, արվեստի դպրոցների պայմանների բարելավում, փողոցային լուսավորման անցկացում, աղբահանության կազմակերպում, համայնքի հասարակական նշանակություն ունեցող վայրերի բարեկարգում, ինչպես նաև համայնքային տարատեսակ միջոցառումների կազմակերպում, որոնցում կներգրավվեն բնակչության տարբեր խմբեր, մասնավորապես երիտասարդներ և կանայք:

Գործընկեր համայնքների և նրանցից յուրաքանչյուրի կողմից իրականացվող ծրագրի կարճ նկարագրությունը կցվում է:

Լոռու մարզ

Դերեղ համայնք

Նպաստել համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացմանը, ինչպես նաև համայնքում տեղեկատվության հասանելիությանը: Ծրագրի բյուջեն՝ 1 700 000 դրամ և 1 000 000 ֆինասավորմամբ և 1 000 000 Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ֆինասավորմամբ:

Դսեղ համայնք

Նպաստել համայնքում տուրիզմի զարգացմանը, համայնքում կազմակերպվող մշակութային միջոցառումների պատշաճ անցկացմանը, ինչպես նաև տեղեկատվության հասանելիության ապահովմանը: Բյուջեն՝ 1 700 000 դրամ

Ծաթեր համայնք

Նպաստել համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանն ու միջհամայնքային կապերի ընդլայնմանը, ինչպես նաև խթանել համայնքի մշակութային արժեքների պահպանումը: Ծրագրի բյուջեն՝ 1 700 000 դրամ և 1 000 000 ֆինասավորմամբ և 1 000 000 Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ֆինասավորմամբ:

Շիրակի մարզ

Ախուրյան համայնք

Համայնքի արվեստի դպրոցի և գրադարանի ջեռուցման համակարգի անցկացում: Բյուջեն՝ 1 700 000 դրամ

Հայկաձոր համայնք

Համայնքի փողոցային լուսավորության անցկացում: Բյուջեն՝ 1 700 000 դրամ

Մարալիկ համայնք

Համայնքի արվեստի դպրոցի մասնակի վերանորոգում: Բյուջեն՝ 1 700 000 դրամ

Տավուշի մարզ

Ալգեհովիտ համայնք

Մշակութային տան երաժշտական խմբակների վերագործարկում: Ծրագրի բյուջեն՝ 1 700 000 դրամ և 1 000 000 ֆինասավորմամբ և 1 000 000 Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ֆինասավորմամբ

Գանձաքար համայնք

Համայնքի աղբահանության ծրագրի իրականացում և բնապահպանության վերաբերյալ բնակչության իրազեկում: Ծրագրի բյուջեն՝ 1 700 000 դրամ և 1 000 000 ֆինասավորմամբ և 1 000 000 Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ֆինասավորմամբ

Կոթի համայնք

Համայնքի հասարակական նշանակություն ունեցող վայրերի բարեկարգում: Բյուջեն՝ 1 700 000 դրամ